

2016թ. երկրորդ եռամսյակի խոշոր հարկ վճարողների ՀՏ մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների վերլուծություն

Սույն վերլուծությունը իրականացվում է այն 519 հարկ վճարողների ամփոփ ցուցանիշների հիման վրա, որոնք ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով ընդգրկված են խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից 2016թ.-ի ընթացքում սպասարկվող հարկ վճարողների ցանկում:

Խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների համեմատական վերլուծությունը իրականացվում է նույն 519 հարկ վճարողների 2016 և 2015 թվականների փաստացի տվյալների հիման վրա:

2016թ. երկրորդ եռամսյակի ամփոփ ցուցանիշների վերլուծության հիման վրա կարելի է փաստել, որ

1. Իրացումից հասույթը կազմել է 880.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ նվազելով 5.3 %-ով:
2. Ներմուծման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել են 11.2 %-ով և կազմել 160.2 մլրդ դրամ:
3. Արտահանման ծավալները նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ նվազել են 4%-ով և կազմել 131.1 մլրդ դրամ:
4. Վճարված մաքսային վճարների ցուցանիշի առումով 2016թ.-ի երկրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 34.8 մլրդ. դրամ:
5. Պետական բյուջե վճարված հարկերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի առումով 2016թ.-ի երկրորդ եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 119.3 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել է 13.1%-ով: Ընդ որում, նշված կազմակերպությունների կողմից 2016թ.-ի երկրորդ եռամսյակում վճարվել է հանրապետությունում հավաքագրված հարկային եկամուտների 54.6 %-ը:
6. Հարկային մարմնի կողմից կատարվել են թվով 156 հարկային ստուգումներ, այդ թվում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության 49 ստուգումներ, որոնց արդյունքում առաջադրվել է բյուջե լրացուցիչ վճարման ենթակա գումարներ 1,6 մլրդ. դրամի չափով:
7. 01.07.2016թ.-ի դրությամբ խոշոր հարկ վճարողներն ունեցել են 140.9 մլրդ. դրամ գերավճար, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի գծով՝ 89.7 մլրդ.

դրամ, իսկ հարկային պարտավորություն՝ 30.5 մլրդ դրամ: Նշված ժամանակահատվածում պետական բյուջեից հարկ վճարողների գերավճարների գումարներից ավելացված արժեքի հարկի վերադարձի ձևակերպում է կատարվել 11.4 մլրդ դրամի չափով, իսկ գերավճարների գումարներից այլ հարկատեսակների գծով հաշվանցվել է 5 մլրդ դրամի չափով:

8. Աշխատողների միջին ցուցակային թիվը դիտարկվող ժամանակահատվածում կազմել է 153309 մարդ, իսկ մեկ աշխատողի միջին ամսական ԱՎՈՒՄ-ը կազմել է 222 հազար դրամ, նախորդ տարվա 230 հազար դրամի փոխարեն: